ZCMC
ԶԱՆԳԵԶՈՒՐ
ՊԱՀՊԱՆԵԼՈՎ
ԱՐԺԵՔՆԵՐԸ

Տարբերակ 1.0
Հաստատված է տնօրենների խորհրդի կողմից
27.11.2024թ.

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «ԶՊՄԿ» կամ «Ընկերություն») իր գործունեության բոլոր ոլորտներում կայուն բնապահպանական մեթոդներ կիրառելու միջոցով ձգտում է օգտակար հանածոների պատասխանատու արդյունահանման, որը նվազագույնի կհասցնի Ընկերության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Ընկերության բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ՝ աշխատակիցները, տեղական համայնքները, բաժնետերերն ու կապալառու կազմակերպություններն իրավունք ունեն Ընկերությունից ակնկալել պատասխանատու և կայուն մոտեցում իր գործունեության նկատմամբ:

Սույն Քաղաքականությունը վերաբերում է ԶՊՄԿ Տնօրենների խորհրդին, Ընկերության ամբողջ անձնակազմին, ներառյալ՝ բարձրագույն ղեկավար կազմը, ինչպես նաև Ընկերության կապալառուներին, գործընկերներին, հյուրերին և այցելուներին այնքանով, որքանով կիրառելի է:

Սույն Քաղաքականության շրջանակում Ընկերությունը՝

- աջակցում է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը և կայուն աշխատանքային մեթոդներին Ընկերության գործունեության բոլոր ուղղություններով՝ նպաստելով շրջակա միջավայրի կառավարման շրջանակում պատասխանատվության և նորարարության մշակույթի զարգացմանը:

- հիմնվում է ՀՀ կանոնակարգերի և կիրառելի միջազգային բնապահպանական չափանիշների վրա և ձգտում է կիրառել շրջակա միջավայրի կայունության վերաբերյալ համաշխարհային լավագույն փորձը՝ նպատակ ունենալով գերազանցել աղտոտման կանխարգելման, ռեսուրսների պահպանման և կենսաբազմազանության պաշտպանության ստանդարտ պահանջները, ներառյալ ISO 14000 ստանդարտները, Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) կատարողական ստանդարտները, Պոչամբարների կառավարման համաշխարհային ստանդարտը, ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրի, Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ՀՄՄԽ) սկզբունքները և ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակները:

- բացահայտում, գնահատում և կառավարում է բնապահպանական վտանգները ռիսկերի գնահատման հուսալի գործընթացի միջոցով:

- շարունակաբար կատարելագործում է Ընկերության շրջակա միջավայրի կառավարման համակարգերը' բնապահպանական գործընթացների ինտեգրումը կազմակերպության բոլոր ստորաբաժանումներում ապահովելու համար:

- զարգացնում է բնապահպանական պատասխանատվության բարձր մշակույթ բոլոր աշխատակիցների և համապատասխան շահագրգիռ կողմերի շրջանակում՝ խրախուսելով ակտիվ մասնակցություն Ընկերության բնապահպանական նախաձեռնություններին և ամրապնդելով կայուն զարգացման նկատմամբ միասնական հանձնառություն:

- իրականացնում է համապարփակ բնապահպանական ուսուցում և ապահովում է կրթությամբ՝ Ընկերության աշխատակիցների և համապատասխան կապալառուների հնարավորություններն ընդլայնելու համար՝ նրանց զինելով գիտելիքներով և գործիքներով, որոնք կարող են արդյունավետ կերպով նպաստել Ընկերության բնապահպանական նպատակների իրականացմանը:

- տրամադրում է անհրաժեշտ միջոցներ սույն Քաղաքականության իրականացման համար:

- սույն Քաղաքականության մասին իրազեկում է բոլոր շահագրգիռ կողմերին, որոնց վրա կարող է ազդեցություն ունենալ Ընկերության գործունեությունը:

- Ընկերության գործունեության բոլոր ուղղություններով թափանցիկ և պրոակտիվ կերպով համագործակցում է համապատասխան շահագրգիռ բոլոր կողմերի հետ բնապահպանական ցուցանիշների շրջանակներում:

- պահպանում է արտակարգ իրավիճակների նկատմամբ պատրաստվածության բարձր մակարդակ՝ բնապահպանական պատահարներին արդյունավետ արձագանքելու և դրանց հետևանքները վերացնելու համար:

- իրականացնում է բնապահպանական պատահարների մանրակրկիտ հետաքննություն՝ դրանց հիմնական պատճառները բացահայտելու, ուղղիչ գործողություններ ձեռնարկելու և ապագա պատահարները կանխելու համար:

- շարունակաբար ամրապնդում է շահագրգիռ կողմերի հետադարձ կապի և մասնակցության ուղիները, գնահատում է տարբեր հեռանկարներ Ընկերության կողմից բնապահպանական որոշումների կայացման գործընթացներում և խթանում է համատեղ լուծումները:

- իրականացնում է Ընկերության բնապահպանական ցուցանիշների մոնիտորինգ և այդ մասին պարբերաբար զեկուցում շահագրգիռ կողմերին:

- ցուցաբերում է պրոակտիվ մոտեցում նոր տեխնոլոգիաների և փորձի ինտեգրման ուղղությամբ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ էներգաարդյունավետությունը, թափոնների կրճատումը, ջրի և կենսաբազմազանության պահպանությունը:

- պարբերաբար վերանայում և թարմացնում է բնապահպանական նպատակներն ու խնդիրները՝ հիմնվելով կատարողականի տվյալների և շահագրգիռ կողմերի հետադարձ կապի վրա:

- պարբերական աուդիտների և վերանայումների շրջանակներում գնահատում է սույն Քաղաքականության կիրառման արդյունքներն ու ցուցանիշները, բացահայտում է դրանց բարելավման ուղղությունները:

Նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան

Հեղինակ՝
Արմեն Ստեփանյան

Tel: +374-60-500003, +374-285-33131
Email: info@zcmc.am

Հրապարակման ամսաթիվը՝ 25.12.2024թ.